



## Ն Ա Խ Ա Ք Ա Ն

Հայ ժողովրդական հեքիաթների այս հատորն ընդգրկում է Մուշ-Բուլանըխի<sup>1</sup>, այլ խոսքով՝ բուն Տարոնի հեքիաթների մի մասը, որ 1896—1936 թ. թ. լրնթացքում գրի է ստել բանասեր-բանահավաք Սահակ Մովսիսյանը (Բենսե): Հատորում ընդգրկված հեքիաթների բնաշխարհը Մուշ-Բուլանըխն է կամ Տարոն-Հարքը, որ մտնում էր պատմական Հայաստանի՝ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի մեջ:

Տուրուբերան նահանգը, ավելի շուտ՝ Տարոնը կամ «Տարոնի աշխարհը» սահմանագծվում է արևելքից՝ Վասպուրականով, արևմուտքից՝ Բյուրակնի (Բինգյուլ) լեռներով, հյուսիսից՝ Հայկական Պարով, հարավից՝ Հայկական Տավրոսի լեռնաշղթայով, իրենց մեջ առած ընդարձակ դաշտավայրեր: Մուշ-Բուլանըխում առանձին լեռնազանգվածներ են Նեմրուժը, Սիփանը, Բլեջանը և Քոսուրը, թեև անտառազուրկ՝ սակայն թփուտներով, մացառներով, բուսականությամբ ու սառնորակ աղբյուրներով շատ հարուստ:

Տարոնի ժողովուրդը զբաղվում էր երկրագործությամբ, այգեգործությամբ, մուղվարսությամբ, բանջարաբուծությամբ և ձկնորսությամբ: Այդ բերրի և արգասիքի աշխարհով հոսում են Արևելյան Եփրատը՝ Արածանին, Մուրատ գետը, Մուղտի գետը (Մուղրագետը) իրենց բազմաթիվ վտակներով, գետեր, որոնք իրենց ավերին առաջացրել են շամբեր, ճահիճներ և ծանծաղուտներ, լի վայրի գազաններով ու թռչուններով: Այդտեղ են գտնվում Նազիկ (Նազուկա), Խաչըվա կամ Խազանա և այլ մանր լճեր, որոնք լի են համեղ ձկներով և ջրային կենդանիներով: Կլիման՝ ցամաքային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ տաք:

<sup>1</sup> Մուշ-Բուլանըխ ենք կոչում այն պատճառով, որ Մուշի (բուն դաշտը) և Բուլանըխի (վերին և ներքին) բնակչության, ինչպես կենցաղի, այնպես և խոսվածքի մեջ ու մի տարրերով չկա:

լեռնաշղթաներով, լեռնային առանձին զանգվածներով ու դաշտավայրերով հարուստ Տարոնը Հին Հայաստանի կենտրոնական աշխարհներից մեկն էր: Մեծ է նրա կատարած դերը հայ ժողովրդի պատմության մեջ, սկսած հնագույն ժամանակներից, մինչև մեր օրերը: Տարոնը ևղել է հայ ժողովրդի հոգևոր կյանքի օրրաններից մեկը, նրա ազատատենչ ոգու խորհրդանիշը: Դեռ հեթանոսական դարերում այդ աշխարհը հայտնի էր աստվածների մահիսաններով ու քազիններով, ոլիմպիական խաղերով ու ուազմի հանդեսներով:

Օտար տիրապետությունների (սելևկյան, պարսկական, բյուզանդական և արաբական) դարաշրջաններում Տարոնը հանդես է ևկել իբրև հայ ժողովրդի անկախության համար մղվող պայքարի զորավիգ: Տարոնի Մամիկոնյան նահարարությունը տվել է պանծալի զորավարներ (Վասակ, Մուշեղ, Համազասպ, Վարդան (Մեծն), Վահան, Գայլ Վահան Մամիկոնյան և շատ ուրիշներ): Տարոնը հայ ժողովրդի ինքնության դրոշակակիրն է եղել:

Քրիստոնեության վաղ շրջանում, ինչպես և հետո, Տարոնը դարձյալ կատարել է նշանակալից դեր: Այս աշխարհում են եղել իր ժամանակի հոգևոր կենտրոնները՝ նշանավոր Գլակա (Իննակնյա), ս. Կարապետի, Առաքելոց, Եղորտի և Դանիլի վանքերն ու դպրատները: Տարոնում է ծնվել հայ գրի ու դպրության նահապարհանարեղ Մեսրոպ Մաշտոցը, պատմահայր Մովսես Խորենացին, Դավիթ Աննաղթ (Հարթացի) փիլիսոփան, Եղիշե, Կորյուն և Մամբրե պատմագիրները, Նևրսես Մեծ և Սահակ Պարթև կաթողիկոսները, որոնք Հայաստանի քաղաքական և մշակութային կյանքում մեծ դեր են խաղացել: Տարոնում է սկիզբ առել և տարածվել սոցիալական այն վիթխարի շարժումը, որ հայտնի է Թոնդրակյան աճումով: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում աստուցների ապստամբական կոիվները արաբական բռնապետության դեմ՝ Խութեցի Հովնանի գլխավորությամբ, վերջապես, այստեղ է ստեղծվել հայ ժողովրդի հերոսական վեպը՝ «Սասնա ծռեր»-ը, որի անդրանիկ պատումը սակ է բնիկ Մշու դաշտի Առնիստ գյուղացի Կրպոն, պատում, որը Դ. Սրվանձախյանցի գրառմամբ հիմնաքար դարձալ հետագայում գրլ. առանձնոր տարբերակների:

Օսմանյան Թուրքիայի բռնակալական տիրապետության ներքո, ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես և Տարոնի ժողովրդական հոծ զանգվածները ենթարկվում էին բիրտ ճնշման ու դաժան հալածանքների: Թուրքական սուլթանները ջանում էին Տարոնի ազգաբնակչությանը դարձնել ուայս (հպատակ՝ ստրուկի իմաստով), որին դիմակայում էր հայ ժողովուրդը իր ազատագրական շարժումներով. ինչպես միջնադարում, այնպես և հետագա դարերում: Վերջնականապես կորցնելով իր անկախությունը, Տարոնը մերթ ընկնում է Էրզրումի, մերթ Բիթլիսի փաշայության գերիշխանության տակ, ի վերջո, 19-րդ դարի կեսերին մտնում Բիթլիսի վիլայեթի մեջ, որպես նրա սանջակներից ամենախոշորը՝ իր հոծ հայությամբ:

Չնայած սուլթանական վայրագ քաղաքականությանը, պատմական փառահեղ անցյալի տեր Տարոնի հայ ժողովուրդը, սակայն, միշտ պահել է իր ստեղծագործ ոգին: Նա ի բնե բանաստեղծ է ու վիպասան՝ բառիս ընդարձակ առումով: Իր հատուկ պատկերավոր մտածողությամբ և հուզականությամբ նա մեր բանահյուսությունը հարստացրել է հոյակապ վիպերգական դրվագներով, հեքիաթներով, աշխատանքի և սիրո երգերով, իմաստուն առակներով ու փիլիսոփայական առսն-ասույթներով:

Այդ են վկայում այս հատորում զետեղված հեքիաթները, որոնց մի մասը երևույթները ծավալում է իրեն հրաշք, և մի մասը այնքան իրապատում, ասես կյանքը ընդհանրացնող պատմվածքներ են: Կյանքի բազմազան երևույթները, Տարոնի ժողովրդի մեջ արտացոլվում են մերթ իրեն բարոյա-իմաստասիրական խրատ, մերթ իրեն չարը հարվածող ու կործանող բարության հաղթանակի հզոր ձայն, մերթ իրեն այրող երգիծանք ընդդեմ բռնակալության և նրա ամեն գույնի ապաստվորների: Ժողովրդական այդ հեքիաթները պատկերավոր են, կառուցիկ, հակիրճ են ու դիպուկ: Ասացողները բոլոր դեպքերում խուսափում են խոսքի ավելորդ ծանրաբեռնվածությունից, հաճախակի շեղումներից, հիմնական միտքը խաթարող կլամենակի դատողություններից:

Առաջին անգամ տպագրվող այս հեքիաթները, պատկանում են «կը» Այուդի բարբառին, որի մասին նույն այս հատորում զետեղված է բանահավաք Ս. Մովսիսյանի (Բենսև) կողմից հատկապես գրված Մուշ-Բուլանջիի բարբառի համառոտ քերականությունը և դժվարհասկանալի և բարբառային բառերի բառարանը:

Բանահավաք Ս. Մովսիսյանը հեքիաթների տակ է զետեղել բազմաթիվ վիպական պատումներ. ժանրային տեսակետից բոլորը չէ, որ կարելի է իսկական հեքիաթներ անվանել: Դրանց մի մասը կենդանական առակներ ու զրույցներ են, մյուս մասը՝ ավանդություններ ու լեգենդներ, իսկ գերակշռող մասը՝ կենցաղային մանրապատում զրույցներ ու ասույթներ: Այնուամենայնիվ, այդ նյութերի մեջ առկա են հեքիաթային տարրեր, սյուժետային գծեր ու դրվագներ: Այդ իսկ պատճառով անջատելով դրանք հեքիաթների բուն բնագրերից, զետեղվում են հատորում առանձին հավելվածների տակ: Հատորում որպես հավելված ներկայացված է նաև բանահավաք Ս. Մովսիսյանի համառոտ կենսագրությունը, նրա հավաքած և հրատարակած նյութերի մատենագիտական ցանկը<sup>1</sup>:

U. S.

<sup>1</sup> Այսին հատորում զետեղված նյութերի բնագրերը գտնվում են Ս. Մովսիսյանի (Բենսև) արխիվում, որը պահպանվում է բանահավաքի որդու՝ Սողոմոն Տարոնցու մոտ (Խմբ.):